ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը 2017 թվականի օգոստոսի 4-10-ը Հայաստանում կազմակերպում է Հայագիտական 8-րդ համահայկական օլիմպիադան և Հայոց եկեղեցու պատմության մրցույթը:

Օլիմպիադային մասնակցում են 14 տարին լրացած և անհրաժեշտ իմացություն ունեցող Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Սփյուռքի դպրոցականներ: Սույն հայտարարությունը սահմանում է դիմելու պայմանները Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դպրոցականների համար:

Օլիմպիադայի նպատակն է՝ խթանել և խրախուսել հայագիտական ոլորտներում պատանիների գիտելիքները, առողջ մրցակցության պայմաններում հնարավորություն տալ նրանց դրսևորել իրենց իմացությունը և ստեղծագործական կարողությունները, ծանոթանալ տարբեր երկրներում բնակվող հասակակիցների հետ, ինչպես նաև անդրադառնալ Հայոց ցեղասպանության խնդիրներին՝ պահանջատիրական դիրքերից:

Օլիմպիադան ընդգրկում է հարցեր հայ գրականությունից, հայոց պատմությունից, հայ մշակույթի պատմությունից: Մասնակիցները պետք է կարողանան դրսևորել գիտելիքներ բոլոր ոլորտներից:

Հայոց եկեղեցու պատմության մրցույթն անցկացվելու է առանձնաբար՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի անմիջական հովանավորությամբ և աջակցությամբ՝ Հայոց եկեղեցու պատմության հարցաշարի հիման վրա:

Հայոց լեզվի, գրականության և հայագիտական գիտելիքների 5-րդ օլիմպիադայի մասնակիցների համար լրացուցիչ նախատեսվում են ասմունքի, հայկական երգի մրցույթներ և վիկտորինա, որոնցից առնվազն մեկին մասնակցությունը պարտադիր է: Այս մրցույթներում հաղթողները պարգևատրվելու են ՀՀ ԿԳՆ պատվոգրերով և խրախուսական մրցանակներով:

Մասնակիցների համար նախատեսված են նաև տարաբնույթ մշակութային, ուսուցողական և ժամանցային միջոցառումներ:

Օլիմպիադայի ընթացքում մասնակիցների և ուղեկցողների կեցության, սննդի և շրջագայության ծախսերը ստանձնում է Հայաստանի Հանրապետությունը: Ճանապարհածախսը հոգում են մասնակիցները կամ համապատասխան կազմակերպությունները:

Մասնակցելու համար հայտերը կարող են ներկայացվել դպրոցի տնօրինության կամ անձամբ՝ աշակերտի կողմից:

Մասնակցության հայտերը պետք է լրացվեն և փոխանցվեն hamahaykakan.olimpiada@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեով մինչև 2017 թվականի մայիսի 21-ը: Մասնակիցների ընտրությունը կատարվելու է ներկայացված հայտերի հիման վրա և Skype-ով անձնական զրույցի արդյունքում: Նախնական ընտրության մասին աշակերտները կտեղեկացվեն մինչև հունիսի 10-ը: Մասնակցության վերջնական հաստատումները դիմորդները ստանան մինչև հունիսի 26-ը ներառյալ:

Օլիմպիադայի անցկացման կարգի վերաբերյալ ամփոփագիրը և պատրաստվելու համար անհրաժեշտ նյութերը, ինչպես նաև մասնակցության հայտաձևը կարելի է գտնել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության պաշտոնական www.edu.am կայքէջում՝ «Սփյուռք» բաժնում և www.armedu.am «Հայկական կրթական միջավայր» պորտալում՝ «Հայտարարություններ» բաժնի «Սփյուռք» ենթաբաժնում:

Հավելյալ հարցերով կարելի է դիմել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն.

հեռ. +374 10 58-13-91
ֆաքս. +374 10 52-73-43
FB: «Սփյուռքի բաժին ՀՀ կրթգիտնախ»
Էլ.փոստ. hamahaykakan.olimpiada@gmail.com, info@edu.am